

ԽՈՐՀՐԴԻ 1993 թվականի նոյեմբերի 23-ի 93/103/ԵՀ ՀՐԱՀԱՆԳ

Ձկնորսական նավերի վրա իրականացվող աշխատանքների մասով աշխատողների անվտանգության և առողջության ապահովման նվազագույն պահանջների մասին (89/391/ԵՏՀ հրահանգի 16(1) հոդվածի իմաստով՝ տասներեքերորդ առանձին հրահանգ)

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ,

հաշվի առնելով «Եվրոպական համայնքի հիմնադրման մասին» պայմանագիրը և, մասնավորապես, դրա 118ա հոդվածը,

հաշվի առնելով Հանձնաժողովից ստացված առաջարկը (1), որը կազմվել է Աշխատավայրում անվտանգության, հիգիենայի և առողջության պահպանման հարցերով խորհրդատվական կոմիտեի հետ խորհրդակցելուց հետո,

համագործակցելով Եվրոպական պառլամենտի հետ (2),

հաշվի առնելով Տնտեսական և սոցիալական հարցերով կոմիտեի եզրակացությունը (3),

քանի որ Խորհուրդը «Աշխատավայրում անվտանգության, հիգիենայի և առողջության մասին» 1987 թվականի դեկտեմբերի 21-ի իր բանաձևում (4) նշել է Հանձնաժողովի՝ աշխատավայրում աշխատողների անվտանգության և առողջության ապահովումը կազմակերպելու վերաբերյալ նվազագույն պահանջներն իրեն ներկայացնելու Հանձնաժողովի մտադրության մասին,

քանի որ աշխատանքային անվտանգության և առողջության ապահովման միջոցները պետք է ներկայացվեն որպես ձկնորսության բնագավառին առնչվող համայնքային տարբեր միջոցների մի մաս,

քանի որ ձկնորսական նավերի վրա անվտանգության և առողջության ավելի բարձր մակարդակ ապահովելու նպատակով անհրաժեշտ նվազագույն պահանջներին համապատասխանելու համար կարևոր է ապահովել տվյալ աշխատողների անվտանգությունն ու առողջությունը,

քանի որ ձկնորսական նավերի վրա աշխատանքային և կյանքի հատուկ ու առանձնապես դժվար պայմանների պատճառով ծովային ձկնորսությամբ զբաղվող աշխատողների շրջանում մահվան ելքով պատահարների թիվը շատ մեծ է,

քանի որ Եվրոպական պառլամենտը 1988 թվականի ապրիլի 15-ին բանաձև ընդունեց՝ ճանաչելով ձկնորսական նավերի վրա իրականացվող աշխատանքների ժամանակ անվտանգության մասով կանխարգելիչ հայեցակետերի կարևորությունը,

քանի որ տվյալ աշխատողների անվտանգության և առողջության ապահովման համար պետք է նշանակություն տրվի արտակարգ իրավիճակների դեպքում ձկնորսական նավերի տեղակայման խնդրին, մասնավորապես, նոր տեխնոլոգիաները կիրառելու միջոցով,

քանի որ սույն Հրահանգը «Աշխատավայրում աշխատողների անվտանգության և առողջության բարելավումը խրախուսելուն ուղղված միջոցների ներդրման մասին» Խորհրդի 1989 թվականի հունիսի 12-ի 89/391/ԵՏՀ հրահանգի 16 (1) հոդվածի իմաստով առանձին հրահանգ է (5), հետևաբար, քանի որ դրա դրույթներն ամբողջությամբ կիրառելի են ձկնորսական նավերի վրա իրականացվող աշխատանքների նկատմամբ՝ չհակասելով սույն Հրահանգի առավել խիստ և (կամ) հատուկ դրույթներին,

քանի որ, եթե այլ բան նախատեսված չէ, ապա աշխատավայրում անվտանգության և առողջության ապահովման ոլորտում արդեն իսկ ընդունված առանձին հրահանգները կիրառվում են ձկնորսության ոլորտում, և քանի որ որոշ դեպքերում կարող է առաջանալ այդ գործունեության որոշակի առանձնահատկությունները սահմանելու անհրաժեշտություն՝ այդ առանձին հրահանգների լավագույնս կիրառումն ապահովելու նպատակով,

քանի որ «Նավերի վրա որակյալ բուժում իրականացնելու համար անհրաժեշտ անվտանգության և առողջության ապահովման նվազագույն պահանջների մասին» Խորհրդի 1992 թվականի մարտի 31-ի 92/29/ԵՏՀ հրահանգն (6) ամբողջությամբ կիրառելի է ձկնարդյունաբերության նկատմամբ,

քանի որ սույն Հրահանգը որոշակի առաջընթաց է՝ ուղղված ներքին շուկայի սոցիալական ուղղվածության ձևավորմանը,

ԸՆԴՈՒՆԵՑ ՍՈՒՅՆ ՀՐԱՀԱՆԳԸ.

Հոդված 1

Կարգավորման առարկան

1. Սույն Հրահանգով, որը 89/391/ԵՏՀ հրահանգի 16(1) հոդվածի իմաստով տասներեքերորդ առանձին հրահանգն է, սահմանվում են 2-րդ հոդվածով նախատեսված՝ նավերի վրա

իրականացվող աշխատանքների նկատմամբ կիրառելի անվտանգության և առողջության ապահովման նվազագույն պահանջները:

2. 89/391/ԵՏՀ հրահանգի դրույթներն ամբողջությամբ կիրառելի են 1-ին պարբերությամբ նախատեսված ոլորտի նկատմամբ՝ չհակասելով սույն Հրահանգի առավել խիստ և (կամ) հատուկ դրույթներին:

Հոդված 2

Սահմանումները

Սույն Հրահանգի նպատակներից ելնելով՝ տվյալ եզրույթները կիրառվում են սույնով դրանց վերագրված հետևյալ իմաստներով՝

ա) «ձկնորսական նավ»՝ անդամ պետության դրոշի ներքո նավարկող կամ անդամ պետության ամբողջական իրավագործության տակ գրանցված և ձկնորսության կամ ձկնորսության ու ձկնամշակման, կամ ծովի այլ կենդանի ռեսուրսների հետ կապված՝ առևտրային նպատակներով կիրառվող ցանկացած նավ.

բ) «նոր ձկնորսական նավ»՝ 15 մետր կամ ավելի երկարություն ունեցող երկու ուղղահայացի միջև ձկնորսական նավ,, որի համար 13 (1) հոդվածի 1-ին ենթապարբերությամբ սահմանված օրը կամ դրանից հետո.

i) կնքվում է կառուցման կամ էական ձևափոխման մասին պայմանագիր կամ

ii) կառուցման կամ էական ձևափոխման մասին պայմանագիրը, որը հանձնվում է այդ օրվանից երեք կամ ավելի տարի անց, կնքված է լինում նախքան 13 (1) հոդվածի 1-ին ենթապարբերությամբ նախատեսված օրը, կամ

iii) կառուցման մասին պայմանագրի բացակայության դեպքում՝

-սկսվում է նավի կառուցումը կամ

- մեկնարկում է հատուկ տեսակի նավի հետ նույնացվող կառույցի կառուցումը կամ

-սկսված է լինում նավի հավաքակցումը, որը ներառում է առնվազն 50 տոննա կառուցվածքային նյութեր կամ բոլոր կառուցվածքային նյութերի գնահատված զանգվածի 1%-ը՝ կախված նրանից, թե որն է ավելի քիչ.

գ) «առկա ձկնորսական նավ»՝ ցանկացած ոչ նոր ձկնորսական նավ՝ 18 մետր կամ ավելի երկարություն ունեցող երկու ուղղահայացի միջև.

դ) «նավ»՝ ցանկացած նոր կամ առկա ձկնորսական նավ.

ե) «աշխատող»՝ նավի վրա գործունեություն իրականացնող ցանկացած անձ՝ ներառյալ վերապատրաստողները և նավաստիները՝ բացառությամբ նավամատուցում գործող նավի անձնակազմի և լոցմանների.

զ) «սեփականատեր»՝ նավի գրանցված սեփականատեր, եթե այդ նավը հանձնված չէ վարձակալության կամ այն մասամբ, կամ ամբողջությամբ չի կառավարվում կառավարման պայմանագրի պայմանների համաձայն գրանցված, սեփականատեր չհանդիսացող ֆիզիկական կամ իրավաբանական անձի կողմից. այդ դեպքում, համապատասխանաբար, սեփականատեր է համարվում վարձակալողը կամ նավը կառավարող ֆիզիկական կամ իրավաբանական անձը.

է) «նավապետ»՝ աշխատող, ով ազգային օրենսդրության և (կամ) ազգային գործելակերպի համաձայն, ղեկավարում է նավը կամ պատասխանատու է դրա համար:

Հոդված 3

Ընդհանուր դրույթներ

1. Անդամ պետությունները ձեռնարկում են անհրաժեշտ միջոցներ, որպեսզի

ա) առանց վնասելու աշխատողների անվտանգությունը և վտանգելու առողջությունը, սեփականատերերի կողմից ապահովվի իրենց նավերի օգտագործումը, մասնավորապես, օդերևութաբանական կանխատեսելի պայմաններում՝ չհակասելով նավապետի պարտավորությանը.

բ) 89/391/ԵՏՀ հրահանգի 8(4) հոդվածի կիրառության դեպքում հաշվի առնվեն մնացած աշխատողներին սպառնացող վտանգները.

գ) համապատասխան իրավասու մարմիններին ներկայացվելիք մանրամասն հաշվետվության մեջ նկարագրվի ծովում տեղի ունեցած ցանկացած դեպք, որը վնասակար ազդեցություն է ունեցել կամ կարող էր ազդեցություն ունենալ նավի աշխատողների անվտանգության ու առողջության վրա, և որպեսզի դրանք ուշադիր ու մանրամասն գրանցվեն նավամատյանում այն դեպքում, երբ ազգային գործող կանոնակարգերով կամ

օրենսդրությամբ նավերի համապատասխան տեսակների համար նախատեսված է այդպիսի մատյանների վարում կամ, այդօրինակ մատյանի բացակայության դեպքում, դրանք գրանցվեն այդ նպատակի համար նախատեսված փաստաթղթում:

2. Անդամ պետություններն անհրաժեշտ միջոցներ են ձեռնարկում՝ ապահովելու համար, որ սույն Հրահանգի պահանջներին համապատասխանելու մասով նավերը ենթարկվում են պարբերաբար անցկացվող ստուգումների՝ նմանօրինակ հատուկ ստուգումներ անցկացնելու իրավասություն ունեցող մարմինների կողմից:

Սույն Հրահանգի պահանջներին համապատասխանելու վերաբերյալ որոշ ստուգումներ կարող են անցկացվել ծովում:

Հոդված 4

Նոր ձկնորսական նավերը

Նոր ձկնորսական նավերը պետք է համապատասխանեն անվտանգության և առողջության ապահովման՝ I հավելվածով սահմանված նվազագույն պահանջներին ամենաուշը մինչև 13(1) հոդվածի առաջին ենթապարբերությամբ նախատեսված օրը:

Հոդված 5

Առկա ձկնորսական նավերը

Առկա ձկնորսական նավերը պետք է համապատասխանեն անվտանգության և առողջության ապահովման՝ II հավելվածով սահմանված նվազագույն պահանջներին՝ 13(1) հոդվածի առաջին ենթապարբերությամբ նախատեսված օրվանից հետո յոթ տարվա ընթացքում:

Հոդված 6

Հիմնանորոգումները, ձևափոխումները և փոփոխությունները

Այն դեպքում, երբ նավերը 13(1) հոդվածի առաջին ենթապարբերությամբ նախատեսված օրը կամ դրանից հետո ենթարկվում են հիմնանորոգման, ձևափոխման և փոփոխությունների, ապա այդ հիմնանորոգումները, ձևափոխումներն ու փոփոխությունները պետք է

համապատասխանեն I հավելվածով սահմանված համապատասխան նվազագույն պահանջներին:

Հոդված 7

Սարքավորումները և տեխնիկական սպասարկումը

1. Անդամ պետությունները, չհակասելով նավապետի պարտավորությանը, աշխատողների անվտանգության և առողջության պահպանության նպատակով անհրաժեշտ միջոցներ են ձեռնարկում՝ ապահովելու համար, որ սեփականատերերը՝

ա) ապահովեն նավի և դրա՝ մասնավորապես, I և II հավելվածով նախատեսված պարագաների և սարքավորումների տեխնիկական սպասարկումը, և որ հնարավորինս շուտ վերացնեն ցանկացած հայտնաբերված թերություն, որը կարող է բացասաբար անդրադառնալ աշխատողների անվտանգությանը և առողջությանը.

բ) հիգիենայի համապատասխան նորմերի պահպանման նպատակով միջոցներ ձեռնարկեն՝ նավերի և դրանց պարագաների պարբերաբար մաքրումն ապահովելու համար.

գ) նավի վրա գտնվող համապատասխան թվով վթարային-փրկարարական և արտակարգ իրավիճակների համար նախատեսված սարքավորումները պահվեն աշխատանքային լավ վիճակում.

դ) հաշվի առնեն III հավելվածում ներկայացված փրկարարական և վթարային-փրկարարական սարքավորումների վերաբերյալ անվտանգության ու առողջության ապահովման նվազագույն պահանջները.

ե) չհակասելով «Աշխատավայրում աշխատողների կողմից անհատական պաշտպանության սարքավորումների օգտագործմանը ներկայացվող առողջության և անվտանգության ապահովման նվազագույն պահանջների մասին» Խորհրդի 1989 թվականի նոյեմբերի 30-ի 89/656/ԵՏՀ հրահանգի (7) դրույթներին (89/391/ԵՏՀ հրահանգի 16(1) հոդվածի իմաստով՝ երրորդ առանձին հրահանգ)՝ հաշվի առնեն անհատական պաշտպանության սարքավորումների՝ սույն Հրահանգին կից IV հավելվածում ներկայացված մասնագրերը:

2. Անդամ պետությունները ձեռնարկում են բոլոր անհրաժեշտ միջոցները՝ ապահովելու համար, որ սեփականատերը, աշխատողների անվտանգության և առողջության

պահպանության նպատակով, նավապետին տրամադրի սույն Հրահանգով նրան վերապահված պարտավորությունների կատարման համար անհրաժեշտ միջոցները:

Հոդված 8

Աշխատողներին տրամադրվող տեղեկատվությունը

1. Չհակասելով 89/391/ԵՏՀ հրահանգի 10-րդ հոդվածի դրույթներին՝ աշխատողները և (կամ) նրանց ներկայացուցիչները պետք է տեղեկացվեն անվտանգության ու առողջության ապահովման համար նավի վրա ձեռնարկվելիք բոլոր միջոցների մասին:
2. Տեղեկատվությունը պետք է հասկանալի լինի տվյալ աշխատողների համար:

Հոդված 9

Աշխատողների վերապատրաստումը

1. Չհակասելով 89/391/ԵՏՀ հրահանգի 12-րդ հոդվածի դրույթներին՝ աշխատողները պետք է նավի վրա անվտանգության և առողջության ապահովման, ինչպես նաև պատահարները կանխելու վերաբերյալ համապատասխան վերապատրաստում անցնեն, մասնավորապես՝ հստակ, հասկանալի ցուցումների ձևով:
 2. 1-ին պարբերությամբ նախատեսված վերապատրաստումը տարածվում է, մասնավորապես, հրդեհամարման, փրկարարական և վթարային-փրկարարական սարքավորումների, ինչպես նաև համապատասխան աշխատողների մասով՝ ձկնորսական պարագաների ու բացատարման սարքավորումների ու տարբեր տեսակի նշանների, այդ թվում՝ ձեռքի ազդանշանների օգտագործման վրա:
- Նավի վրա իրականացվող գործունեության մեջ կատարվող փոփոխություններով պայմանավորված անհրաժեշտության դեպքում, նմանատիպ վերապատրաստումը պետք է անհրաժեշտաբար թարմացվի:

Հոդված 10

Նավի ղեկավարումն իրականացնող անձանց հանգամանալից վերապատրաստումը

Չհակասելով 92/29/ԵՏՀ հրահանգի 5(3) հոդվածի դրույթներին՝ ցանկացած անձ, ով կարող է իրականացնել նավի ղեկավարումը, պետք է հանգամանալից վերապատրաստում անցնի հետևյալի վերաբերյալ՝

ա) նավի վրա մասնագիտական հիվանդությունների կանխարգելում և վթարների կանխում, ինչպես նաև վթարի դեպքում ձեռնարկվելիք քայլեր.

բ) բեռնվաճառության կանխատեսելի պայմաններում և ձկնորսական գործողությունների ընթացքում նավի կայունության ու տեխնիկական սպասարկման ապահովում.

գ) ռադիոնավագնացություն և հաղորդակցություն՝ ներառյալ ընթացակարգերը:

Հոդված 11

Խորհրդակցությունն աշխատողների հետ և նրանց մասնակցությունը

Աշխատողների և (կամ) նրանց ներկայացուցիչների հետ անցկացվող խորհրդակցությունն ու նրանց մասնակցությունը՝ սույն Հրահանգով և դրա հավելվածներով կարգավորվող հարցերի քննարկումներին, տեղի է ունենում 89/391/ԵՏՀ հրահանգի 11-րդ հոդվածին համապատասխան:

Հոդված 12

Հավելվածների փոփոխությունները

Հավելվածների զուտ տեխնիկական բնույթի փոփոխությունները՝ հաշվի առնելով.

- նավերի վրա անվտանգության և առողջության որոշ հայեցակետերի վերաբերյալ տեխնիկական ներդաշնակեցման ու ստանդարտացման ոլորտում հրահանգների ընդունումը.

և (կամ)

-տեխնիկական առաջընթացով, միջազգային կանոնակարգերում կամ մասնագրերում կատարվող փոփոխությունները և նավերի վրա անվտանգության ու առողջության ապահովման ոլորտի նոր բացահայտումները.

ընդունվում են 89/391/ԵՏՀ հրահանգի 17-րդ հոդվածով սահմանված ընթացակարգի համաձայն:

Հոդված 13

Եզրափակիչ դրույթներ

1. Անդամ պետություններն ուժի մեջ են մտցնում սույն Հրահանգին համապատասխանելու համար անհրաժեշտ օրենքները, կանոնակարգերն ու վարչական ակտերը մինչև 1995 թվականի նոյեմբերի 23-ը: Նրանք դրա մասին անմիջապես տեղեկացնում են Հանձնաժողովին:

Երբ անդամ պետությունները սահմանում են այդ միջոցները, դրանք պետք է հղում պարունակեն սույն Հրահանգին կամ ուղեկցվեն նման հղումով՝ դրանց պաշտոնական հրապարակման դեպքում: Նման հղում կատարելու տարբերակները սահմանվում են անդամ պետությունների կողմից:

2. Անդամ պետությունները Հանձնաժողով են ներկայացնում ազգային իրավունքի դրույթների տեքստերը, որոնք նրանք արդեն ընդունել են կամ ընդունում են սույն Հրահանգով կարգավորվող ոլորտում:

3. Անդամ պետությունները յուրաքանչյուր չորս տարին մեկ անգամ սույն Հրահանգի գործնական կիրառման վերաբերյալ հաշվետվություն են ներկայացնում Հանձնաժողով՝ նշելով գործատուների և աշխատողների տեսակետները:

Հանձնաժողովը դրա մասին տեղեկացնում է Եվրոպական պառլամենտին, Խորհրդին, Տնտեսական և սոցիալական հարցերով կոմիտեին ու Աշխատավայրում անվտանգության, հիգիենայի ու առողջության պահպանման հարցերով խորհրդատվական կոմիտեին:

4. Հանձնաժողովը Եվրոպական պառլամենտ, Խորհուրդ ու Տնտեսական և սոցիալական հարցերով կոմիտե սույն Հրահանգի կիրարկման վերաբերյալ պարբերաբար հաշվետվություն է ներկայացնում՝ հաշվի առնելով 1-ին, 2-րդ և 3-րդ պարբերությունները:

Հոդված 14

Սույն Հրահանգը հասցեագրված է անդամ պետություններին:

Կատարված է Բրյուսելում, 1993 թվականի նոյեմբերի 23-ին:

Խորհրդի կողմից՝

Նախագահ Մ. Սմեթ

- 1) ՊՏ թիվ C 337, 31.12.1991թ., էջ 21, ՊՏ թիվ C 311, 27.11.1992թ., էջ 21:
- 2) ՊՏ թիվ C 241, 21.09.1992թ., էջ 106 և 1993 թվականի հոկտեմբերի 27-ի որոշում (Պաշտոնական տեղեկագրում դեռ չի հրապարակվել):
- 3) ՊՏ թիվ C 169, 06.07.1992թ., էջ 46:
- 4) ՊՏ թիվ C 28, 03.02.1988թ., էջ 1:
- 5) ՊՏ թիվ L 183, 29.06.1989թ., էջ 1:
- 6) ՊՏ թիվ L 113, 30.04.1992թ., էջ 19:
- 7) ՊՏ L 393, 30.12.1989թ., էջ 18:

**ՆՈՐ ԶԿՆՈՐՍԱԿԱՆ ՆԱՎԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ՝ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԵՎ
ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ՊԱՀԱՆՋՆԵՐ**

(4-րդ, 6-րդ և 7 (1) (ա)) հոդվածներ

Նախնական նշում

Սույն հավելվածով սահմանված պարտավորությունները կիրառվում են բոլոր այն դեպքերում, երբ դա պահանջվում է՝ ելնելով աշխատավայրի առանձնահատկություններից՝ գործունեության տեսակից, հանգամանքներից կամ նոր ձկնորսական նավի վրա որոշակի ռիսկի առկայությունից:

1. Ծովագնացության համար պիտանիությունը և կայունությունը

1.1. Նավը պետք է պահպանվի ծովագնացության համար պիտանի վիճակում և պատշաճ կերպով հագեցված լինի իր նպատակային նշանակությանն ու օգտագործմանը համապատասխան սարքավորումներով:

1.2. Նավի կայունության մասին տեղեկատվությունը պետք է առկա լինի նավի վրա և մատչելի լինի հերթապահի համար:

1.3. Բոլոր նավերը պետք է բավականաչափ կայուն լինեն, երբ դրանք գործում են դրանց նպատակային նշանակության համար նախատեսված շահագործման պայմաններում:

Նավապետն անհրաժեշտ նախազգուշական միջոցներ պետք է ձեռնարկի՝ նավի համապատասխան կայունությունն ապահովելու նպատակով:

Նավի կայունության վերաբերյալ տրված ցուցումները պետք է խստագույնս պահպանվեն:

2. Մեխանիկական և էլեկտրական կայանքները

2.1. Էլեկտրական կայանքները պետք է նախագծվեն և կառուցվեն այնպես, որ իրենցից որևէ վտանգ չներկայացնեն և ապահովեն՝

-անձնակազմի և նավի պաշտպանությունը՝ էլեկտրականության հետևանքով առաջացող վտանգներից.

-բոլոր այն սարքավորումների պատշաճ աշխատանքը, որոնք առանց վթարային դեպքերի համար նախատեսված էլեկտրաէներգիայից օգտվելու, անհրաժեշտ են նավի վրա՝ բնականոն գործառական և կենսական պայմանները պահպանելու համար.

- էլեկտրական այն սարքավորումների աշխատանքը, որոնք էական դեր ունեն՝ վթարային բոլոր իրավիճակներում անվտանգությունն ապահովելու համար:

2.2. Անհրաժեշտ է վթարային դեպքերի համար սահմանված էլեկտրասնուցման աղբյուր նախատեսել:

Բացառությամբ բաց տիպի նավերի՝ այն պետք է տեղակայված լինի մեքենասրահից դուրս և բոլոր դեպքերում պետք է տեղադրված լինի այնպես, որ հրդեհի կամ էլեկտրական հիմնական կայանքի խափանման այլ դեպքերում դրանով ապահովվի ստորև նշվածի միաժամանակ՝ առնվազն երեք ժամ տևողությամբ աշխատանքը՝

-ներքին հաղորդակցության համակարգ, հրդեհի հայտնաբերման համակարգեր և վթարային ազդանշաններ.

-նավիզացիոն լույսեր և վթարային լուսավորում.

-ռադիոկայանք.

-վթարային էլեկտրական հրշեջ պոմպ՝ առկայության դեպքում:

Այն դեպքում, երբ էլեկտրաէներգիայի՝ վթարային դեպքերի համար նախատեսված սնուցման աղբյուրը կուտակչային մարտկոց է, և էլեկտրասնուցման հիմնական աղբյուրը խափանվում է, կուտակչային մարտկոցը պետք է մեխանիկորեն միանա վթարային էլեկտրական վահանակին և երեք ժամ անընդմեջ հոսանք մատակարարի երկրորդ ենթապարբերության առաջին, երկրորդ և երրորդ պարբերություններով նախատեսված համակարգերին:

Հիմնական էլեկտրական վահանակը և վթարային էլեկտրական վահանակը պետք է հնարավորինս այնպես տեղակայված լինեն, որպեսզի միաժամանակ չենթարկվեն ջրի կամ կրակի ազդեցությանը:

2.3. Վահանակների վրա պետք է հստակ նշում կատարվի, հալուն ապահովիչները և ապահովիչների բնիկները պետք է պարբերաբար ստուգվեն՝ ապահովելու համար հալուն ապահովիչների պարամետրերի ճիշտ կիրառումը:

2.4. Այն խցիկները, որտեղ պահվում են կուտակչային մարտկոցները, պետք է համապատասխան կերպով օդափոխվեն:

2.5. էլեկտրոնային նավիզացիոն սարքավորումները պետք է հաճախակի փորձարկվեն և տեխնիկապես լավ սպասարկվեն:

2.6. Ամբարձման համար օգտագործվող բոլոր սարքավորումները պետք է պարբերաբար փորձարկվեն և ստուգվեն:

2.7. Բացատարման կարապիկի, ամբարձման մեխանիզմների և հարակից սարքավորումների բոլոր մասերը պետք է պահվեն սարքին և աշխատանքային բարվոք վիճակում:

2.8. Սառեցման սարքավորումներ և սեղմված օդի մատակարարման համակարգեր տեղադրված լինելու դեպքում, դրանք պետք է տեխնիկապես լավ սպասարկվեն և պարբերաբար ստուգվեն:

2.9. Ծանր գազերով աշխատող խոհարարական և կենցաղային պարագաները պետք է օգտագործվեն միայն լավ օդափոխված տարածքներում, և պետք է ուշադիր լինել՝ գազի վտանգավոր կուտակումից խուսափելու համար:

Դյուրավառ և այլ վտանգավոր գազեր պարունակող բալոնների վրա պետք է հստակ նշում կատարվի դրանց պարունակության վերաբերյալ, և դրանք պետք է դասավորված լինեն բաց տախտակամածների վրա:

Բոլոր փականները, ճնշման կարգավորիչները և բալոններից դուրս եկող խողովակները պետք է պաշտպանված լինեն վնասվածքներից:

3. Ռադիոկայանքները

Ռադիոկայանքը պետք է ցանկացած ժամանակ ապահովի անընդհատ կապ առնվազն մեկ ափամերձ կամ վերգետնյա կայանքի հետ՝ հաշվի առնելով ռադիոալիքների տարածման նորմալ պայմանները:

4. Վթարային անցուղիները և ելքերը

4.1. Անցուղիները և ելքերը, որոնք կարող են օգտագործվել որպես վթարային անցուղիներ ու ելքեր, պետք է ցանկացած ժամանակ անխոչընդոտ և հեշտ հասանելի լինեն և տանեն հնարավորինս ուղղակիորեն դեպի բաց տախտակամած կամ ապահով վայր և այդտեղից՝ փրկարար նավեր այնպես, որ աշխատողները հնարավորինս արագ և ապահով կարողանան լքել իրենց աշխատակայանները կամ բնակելի տարածքները:

4.2. Որպես վթարային կիրառվելու հնարավորություն ունեցող անցուղիների և ելքերի թիվը, բաշխվածությունն ու չափսերը պետք է կախված լինեն դրանց կիրառությունից,

սարքավորումներից և աշխատավայրի ու բնակելի տարածքի չափսերից, ինչպես նաև ներկա գտնվող անձանց հնարավոր առավելագույն թվից:

Որպես վթարային կիրառվելու հնարավորություն ունեցող և փակ ելքերը արտակարգ իրավիճակներում պետք է ցանկացած աշխատակցի կամ փրկարարական խմբի կողմից անմիջապես և հեշտությամբ օգտագործվելու հնարավորություն ունենան:

4.3. Վթարային դռները և մյուս վթարային ելքերը պետք է համապատասխան կերպով եղանակակայուն և ջրակայուն լինեն՝ պայմանավորված դրանց գտնվելու վայրով և առանձնահատուկ գործառույթով:

Վթարային դռները և մյուս վթարային ելքերը պետք է այնքան հրակայուն լինեն, որքան միջնորմները:

4.4. Վթարային անցուղիները և ելքերը պետք է ցույց տրվեն նշանների միջոցով՝ 92/58/ԵՏՀ հրահանգը (1) փոխատեղող ազգային դրույթների համաձայն:

Այդպիսի նշանները պետք է տեղադրվեն համապատասխան կետերում և մշտապես պահպանվեն:

4.5. Հոսանքազրկման դեպքում, լուսավորության կարիք ունեցող պահեստային ելքերը և հարմարանքներն ու վթարային ելքերը պետք է ապահովվեն համապատասխան ուժգնության վթարային լուսավորմամբ:

5. Հրդեհի հայտնաբերումը և հրդեհամարումը

5.1. Կախված նավի չափսերից և օգտագործման նպատակներից, դրանում պարունակվող սարքավորումներից, առկա նյութերի ֆիզիկական և քիմիական հատկանիշներից և ներկա գտնվող անձանց հնարավոր առավելագույն թվից՝ բնակելի տարածությունը և փակ աշխատավայրերը, այդ թվում՝ մեքենասարահը և, անհրաժեշտության դեպքում՝ ձկներ պահելու նավամբարը, պետք է հազեցված լինեն հրդեհամարման համապատասխան սարքերով, իսկ անհրաժեշտության դեպքում՝ հրդեհի հայտնաբերման սարքերով և ազդանշանային համակարգերով:

5.2. Հրդեհամարման սարքերը պետք է մշտապես պահվեն համապատասխան վայրում, պահպանվեն լավ աշխատանքային վիճակում և անհապաղ օգտագործման համար հասանելի լինեն:

Աշխատողները պետք է ծանոթ լինեն հրդեհամարման սարքերի գտնվելու վայրին, դրանց աշխատելու եղանակին և դրանց օգտագործման ձևին:

Նախքան նավի մեկնումը՝ պետք է մշտապես ստուգվի հրամարիչների և հրդեհամարման այլ շարժական սարքերի առկայությունը:

5.3. Ձեռքով կառավարվող հրդեհամարման սարքերը պետք է հեշտ հասանելի ու օգտագործման համար պարզ լինեն և ցույց տրվեն նշանների միջոցով՝ 92/58/ԵՏՀ հրահանգը փոխատեղող ազգային դրույթների համաձայն:

Այդպիսի նշանները պետք է տեղադրվեն համապատասխան կետերում և մշտապես պահպանվեն:

5.4. Հրդեհի հայտնաբերման և ազդանշանային համակարգերը պետք է պարբերաբար փորձարկվեն ու տեխնիկապես լավ սպասարկվեն:

5.5. Պարբերաբար պետք է անցկացվեն հրդեհամարման վարժանքներ:

6. Փակ աշխատավայրերի օդափոխությունը

Անհրաժեշտ է ձեռնարկել քայլեր՝ հավաստիանալու համար, որ փակ աշխատավայրերում առկա է բավարար չափով մատակարարվող մաքուր օդ՝ հաշվի առնելով կիրառվող աշխատանքային մեթոդները և աշխատողների նկատմամբ սահմանված ֆիզիկական պահանջները:

Օդափոխության մեխանիկական համակարգի կիրառման դեպքում, այն պետք է լավ վիճակում պահպանվի:

7. Աշխատանքային տարածքներում առկա ջերմաստիճանը

7.1. Ջերմաստիճանն աշխատանքային տարածքներում պետք է համարժեք լինի աշխատանքային ժամերի ընթացքում մարդու օրգանիզմի համար անհրաժեշտ ջերմաստիճանին՝ հաշվի առնելով կիրառվող աշխատանքային մեթոդները և աշխատողների նկատմամբ սահմանված ֆիզիկական պահանջները, ինչպես նաև փաստացի կամ հնարավոր եղանակային պայմաններն այն տարածքում, որտեղ գործում է նավը:

7.2. Ջերմաստիճանը բնակելի տարածություններում, սանհանգույցներում, ճաշարաններում և առաջին օգնության համար նախատեսված սենյակներում, այդ տարածքների

առկայության դեպքում, պետք է համապատասխանի այդպիսի տարածքների օգտագործման հատուկ նշանակությանը:

8. Աշխատավայրերի բնական և արհեստական լուսավորությունը

8.1. Աշխատավայրերը հնարավորինս պետք է ապահովված լինեն բնական լույսով և հագեցված լինեն ձկնորսության համար համապատասխան արհեստական լուսավորության սարքերով՝ առանց վնասելու աշխատողների անվտանգությունն ու առողջությունը կամ վտանգելու մյուս նավերը:

8.2. Աշխատանքային տարածքներում, աստիճանների, սանդուղքների մոտ և միջանցքներում լուսավորման սարքերը պետք է տեղադրված լինեն այնպես, որ տրամադրվող լուսավորության տեսակը դժբախտ պատահարի առաջացման ռիսկ չներկայացնի աշխատողների համար և չխոչընդոտի նավի նավագնացությունը:

8.3. Այն աշխատավայրերը, որտեղ աշխատողները վտանգի առավելապես բարձր ռիսկի են ենթարկված, արհեստական լուսավորության խափանումների դեպքում, պետք է ապահովված լինեն համապատասխան ուժգնության վթարային լուսավորմամբ:

8.4. Վթարային լուսավորումը պետք է պահպանվի արդյունավետ կերպով գործող վիճակում և փորձարկվի պարբերաբար:

9. Տախտակամածները, միջնորմները և խցի վերնամասերը:

9.1. Աշխատողների համար մատչելի տարածքները պետք է լինեն ոչ սայթաքուն կամ հակասայթաքուն կամ ապահովված լինեն ընկնելը կանխող սարքերով ու հնարավորինս զերծ պահվեն խոչընդոտներից:

9.2. Աշխատակայաններ ընդգրկող աշխատավայրերը պետք է բավարար չափով ձայնամեկուսացված և մեկուսացված լինեն՝ հաշվի առնելով ընդգրկված առաջադրանքների տեսակը և աշխատողների ֆիզիկական ակտիվությունը:

9.3. Տախտակամածների, միջնորմների և խցի վերնամասերի մակերեսներն աշխատանքային տարածքներում պետք է լինեն այնպիսին, որ հնարավոր լինի դրանք մաքրել կամ նորացնել՝ հիգիենայի համապատասխան նորմերի համաձայն:

10. Դռները

10.1. Միջոցներ պետք է նախատեսվեն, որպեսզի դռներն առանց հատուկ սարքավորումների հնարավոր լինի ցանկացած ժամանակ օգտագործել ներսից :

Աշխատանքային տարածքների օգտագործման ժամանակ դռները պետք է հնարավոր լինի օգտագործել ցանկացած կողմից:

10.2. Դռները և, մասնավորապես, սահող դռները, եթե այդպիսիք օգտագործվում են, պետք է գործեն աշխատողների համար հնարավորինս անվտանգ կերպով, հատկապես՝ եղանակային կամ ծովային վատ պայմաններում:

11. Երթուղիները – վտանգավոր տարածքները

11.1. Միջանցքները, ճոռերը, նավախցիկների արտաքին հատվածներն ու բոլոր երթուղիներն ընդհանրապես պետք է հագեցված լինեն ճաղաշարերով, բռնածողերով և փրկապարաններով ու նավի վրա աշխատանքներ իրականացնելու ժամանակ աշխատողների անվտանգությունն ապահովող այլ միջոցներով:

11.2. Այն դեպքում, երբ աշխատողներին տախտակամածի բացվածքներից կամ մեկ տախտակամածից մյուսի վրա ընկնելու վտանգ է սպառնում, ապա ամենուր պետք է ապահովել համապատասխան պաշտպանություն:

Երբ այդօրինակ պաշտպանությունն ապահովվում է ճաղաշարերի միջոցով, ապա դրանք պետք է առնվազն մեկ մետր բարձրություն ունենան:

11.3. Աշխատանքներ կատարելու կամ տեխնիկական սպասարկման նպատակով մուտքը դեպի տախտակամածից վերև գտնվող կայանքներ պետք է այնպիսին լինի, որ ապահովի աշխատողների անվտանգությունը:

Ընկնելը կանխելու համար պետք է նախատեսվեն ճաղաշարեր կամ համապատասխան բարձրության նմանատիպ պաշտպանական սարքեր:

11.4. Նավակողի ելուստները կամ նավից ընկնելը կանխելու համար նախատեսված մյուս միջոցները պետք է պահվեն գործող վիճակում:

Նավակողի ելուստները պետք է ունենան նավակողանցքներ կամ այլ համանման սարքեր՝ ջուրն արագ դատարկելու համար:

11.5. Թեք հարթակներով նավախելային ձկնորսանավերի դեպքում, թեք հարթակի վերևի մասում պետք է տեղադրված լինեն ուղեկալներ կամ նավակողի ելուստների նման՝ միևնույն բարձրության պաշտպանական այլ միջոցներ կամ այլ հարակից միջոցներ՝ թեք հարթակին ընկնելու վտանգի ռիսկից աշխատողներին պաշտպանելու նպատակով:

Այդ ուղեկալները կամ մյուս սարքերը պետք է հնարավոր լինի հեշտությամբ բացել և փակել, նախընտրելի է՝ հեռակառավարման եղանակով, և դրանք պետք է բաց լինեն միայն ցանցը նետելու կամ այն դուրս բերելու համար:

12. Աշխատակայանների կառուցվածքը

12.1. Աշխատանքային տարածքները պետք է մաքուր վիճակում պահվեն և հնարավորինս պաշտպանված լինեն ծովից, ինչպես նաև նավի վրա կամ նավի վրայից ընկնելու վտանգի դեմ համարժեք պաշտպանություն ապահովեն աշխատողների համար:

Բեռնման և բեռնաթափման համար նախատեսված տարածքները պետք է բավականաչափ ընդարձակ լինեն ինչպես բարձրությամբ, այնպես էլ մակերեսով:

12.2. Եթե շարժիչները կառավարվում են մեքենասրահից, ապա դրանք պետք է կառավարվեն առանձին տարածքից, որը, որպես այդպիսին, ձայնամեկուսացված և մեկուսացված կլինի մեքենասրահից և հասանելի կլինի առանց այդ տարածք մուտք գործելու:

Նավավարման կամրջակը համարվում է մի տարածք, որը համապատասխանում է առաջին ենթապարբերության պահանջներին:

12.3. Բացատարման կարապիկի կառավարման սարքերը պետք է տեղադրված լինեն բավականաչափ ընդարձակ տարածքում՝ օպերատորներին անարգել աշխատելու հնարավորություն տալու համար:

Բացատարման կարապիկը պետք է ունենա նաև արտակարգ իրավիճակների համար նախատեսված համապատասխան անվտանգության սարքեր, այդ թվում՝ վթարային շարժականգի հարմարանքներ:

12.4. Բացատարման կարապիկի օպերատորների տեսադաշտում պետք է համապատասխանաբար երևան բացատարման կարապիկը և աշխատողները՝ աշխատելիս:

Բացատարման կարապիկը կամրջակից կառավարվելու դեպքում, օպերատորի տեսադաշտում պետք է նաև ուղղակիորեն կամ համապատասխան այլ միջոցներով հստակ կերպով երևան աշխատողները՝ աշխատելիս:

12.5. Կամրջակի և աշխատանքային հարթակի միջև պետք է օգտագործվի հաղորդակցության հուսալի համակարգ:

12.6. Պետք է մշտապես զգոնություն ցուցաբերվի, և անձնակազմի անդամները ձկնորսության ժամանակ կամ տախտակամածի վրա այլ աշխատանքներ կատարելիս պետք է զգուշացվեն մոտալուտ մեծ ալիքների անմիջական վտանգի մասին:

12.7. Չպաշտպանված պարանների և ճոպանների, ինչպես նաև սարքավորումների շարժվող մասերի հետ շփումը պետք է նվազագույնի հասցվի պաշտպանական սարքերի տեղակայման միջոցով:

12.8. Հատկապես նավախելային ձկնորսանավերի վրա պետք է տեղակայվեն շարժվող զանգվածների համար նախատեսված կառավարման սարքեր՝

-պահանգատախտակներն անշարժ պահող սարքեր.

- ուռկանի ճոճը կարգավորող սարքեր:

13. Բնակելի տարածությունները

13.1. Աշխատողների համար նախատեսված բնակելի տարածությունների և այլ կառույցների, եթե այդպիսիք կան, գտնվելու վայրը, կառուցվածքը, ձայնամեկուսացումը, մեկուսացման տարբերակներն ու դասավորությունը և դրանք մուտք գործելու միջոցները պետք է այնպիսին լինեն, որ դրանցով ապահովվի համապատասխան պաշտպանություն՝ եղանակային ու ծովային պայմաններից, թրթռումներից, աղմուկից և աշխատողների հանգստի ժամանակ նավի մյուս հատվածներից եկող և նրանց անհանգստություն պատճառող տհաճ հոտերից:

Եթե նավի կառուցվածքը, չափսերը և (կամ) նպատակային նշանակությունը հնարավորություն են տալիս, ապա աշխատողների համար նախատեսված բնակելի տարածությունները պետք է այնպես տեղակայված լինեն, որ նվազագույնի հասցվեն շարժման և արագացման ազդեցությունները:

Հնարավորության սահմաններում պետք է ձեռնարկվեն համապատասխան միջոցներ՝ չծխողներին ծխախոտի ծխով պատճառած անհարմարությունից զերծ պահելու համար:

13.2. Աշխատողների համար նախատեսված բնակելի տարածությունները պետք է պատշաճ կերպով օդափոխված լինեն՝ մաքուր օդի շարունակական մատակարարումն ապահովելու և կոնդենսացումը կանխելու համար:

Բնակելի տարածություններում պետք է ապահովվի համապատասխան լուսավորություն՝ ներառյալ

- համապատասխան նորմալ ընդհանուր լուսավորությունը.

- հանգստացող աշխատողներին անհանգստություն պատճառելուց խուսափելու համար՝ պակասեցված ընդհանուր լուսավորությունը և

-տեղային լուսավորություն՝ յուրաքանչյուր մահճակալի մոտ :

13.3. Նավախոհանոցը և ընդհանուր ճաշարանը, եթե այդպիսիք կան, պետք է համապատասխան չափեր ունենան, լինեն լավ լուսավորված և օդափոխված ու հնարավոր լինի դրանք հեշտությամբ մաքրել:

Անհրաժեշտ է նախատեսել սառնարաններ և սննդամթերք պահելու՝ ցածր ջերմաստիճան ապահովող այլ սարքավորումներ:

14. Սանհանգույցները

14.1. Բնակելի տարածություններ ունեցող նավերի վրա պետք է լինեն ցնցուղարաններ՝ տաք և սառը հոսող ջրով, լվացարանակոնքերը և զուգարանները պետք է պատշաճորեն հագեցված սարքավորումներով և տեղադրված լինեն, և համապատասխան տարածքները պետք է պատշաճ կերպով օդափոխվեն:

14.2. Յուրաքանչյուր աշխատող պետք է ունենա տեղ, որը նա կարող է օգտագործել՝ իր հագուստը պահելու համար:

15. Առաջին օգնությունը

Բոլոր նավերի վրա պետք է առկա լինեն 92/29/ԵՏՀ հրահանգի II հավելվածի պահանջները բավարարող առաջին օգնության սարքավորումներ:

16. Արտաքին սանդուղքները և լաստակները

Պետք է առկա լինեն արտաքին սանդուղքներ, լաստակներ կամ այլ նմանատիպ սարքավորումներ, որոնք ապահովում են նավ բարձրանալու համար պատշաճ, անվտանգ միջոցներով:

17. Աղմուկը

Աղմուկի մակարդակը աշխատավայրերում և բնակելի տարածություններում հնարավորինս նվազեցնելու համար պետք է ձեռնարկվեն բոլոր համապատասխան տեխնիկական միջոցները՝ հաշվի առնելով նավի չափսերը:

1) ՊՏ թիվ L 245, 26.08.1992թ., էջ. 23:

**ԱՌԿԱ ԶԿՆՈՐՍԱԿԱՆ ՆԱՎԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ՝ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԵՎ
ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ՊԱՀԱՆՋՆԵՐ**

(5-րդ և 7 (1) (ա) հոդվածներ)

Նախնական նշում

Սույն հավելվածով սահմանված պարտավորությունները կիրառվում են այնքանով, որքանով առկա ձկնորսական նավի կառուցվածքային առանձնահատկությունները թույլ են տալիս, երբ դա պահանջվում է՝ ելնելով աշխատավայրի առանձնահատկություններից, գործունեության տեսակից, հանգամանքներից կամ գոյություն ունեցող ձկնորսական նավի վրա որոշակի ռիսկի առկայությունից:

1. Ծովագնացության համար պիտանիությունը և կայունությունը

1.1. Նավը պետք է պահպանվի ծովագնացության համար պիտանիության վիճակում և պատշաճ կերպով հագեցված լինի իր նպատակային նշանակությանն ու օգտագործմանը համապատասխան սարքավորումներով:

1.2. Նավի կայունության մասին տեղեկատվությունը, եթե այդպիսին կա, պետք է առկա լինի նավի վրա և մատչելի լինի հերթապահի համար:

1.3. Բոլոր նավերը պետք է բավականաչափ կայուն լինեն, երբ դրանք գործում են դրանց նպատակային նշանակության համար նախատեսված շահագործման պայմաններում:

Նավապետն անհրաժեշտ նախազգուշական միջոցներ պետք է ձեռնարկի նավի համապատասխան կայունությունն ապահովելու նպատակով:

Նավի կայունության վերաբերյալ տրված ցուցումները պետք է խստագույնս պահպանվեն:

2. Մեխանիկական և էլեկտրական կայանքները

2.1. Էլեկտրական կայանքները պետք է նախագծվեն և կառուցվեն այնպես, որ իրենցից որևէ վտանգ չներկայացնեն և ապահովեն՝

-անձնակազմի և նավի պաշտպանությունը՝ էլեկտրականության հետևանքով առաջացող վտանգներից.

-բոլոր այն սարքավորումների պատշաճ աշխատանքը, որոնք առանց վթարային դեպքերի համար նախատեսված էլեկտրաէներգիայից օգտվելու, անհրաժեշտ են՝ նավի վրա բնականոն գործառական և կենսական պայմաններ պահպանելու համար.

- էլեկտրական այն սարքավորումների աշխատանքը, որոնք էական դեր ունեն վթարային բոլոր իրավիճակներում անվտանգությունն ապահովելու համար:

2.2. Անհրաժեշտ է վթարային դեպքերի համար սահմանված էլեկտրասնուցման աղբյուր նախատեսել :

Բացառությամբ բաց տիպի նավերի՝ վթարային դեպքերի համար նախատեսված էլեկտրասնուցման աղբյուրը պետք է տեղակայված լինի մեքենասրահից դուրս և, բոլոր դեպքերում, պետք է տեղադրված լինի այնպես, որ հրդեհի կամ էլեկտրական հիմնական կայանքի խափանման դեպքում դրանով ապահովվի ստորև նշվածի հետ միաժամանակ՝ առնվազն երեք ժամ տևողությամբ աշխատանքը՝

-ներքին հաղորդակցության համակարգ, հրդեհի հայտնաբերման սարքեր և վթարային ազդանշաններ.

-նավիգացիոն լույսեր և վթարային լուսավորում.

-ռադիոկայանք.

-առկայության դեպքում՝ վթարային էլեկտրական հրշեջ պոմպ:

Այն դեպքում, երբ վթարային դեպքերի համար նախատեսված էլեկտրասնուցման աղբյուրը կուտակչային մարտկոց է, և էլեկտրասնուցման հիմնական աղբյուրը խափանվում է, ապա կուտակչային մարտկոցը պետք է մեխանիկորեն միանա վթարային էլեկտրական վահանակին և երեք ժամ անընդմեջ հոսանք մատակարարի երկրորդ ենթապարբերության առաջին, երկրորդ և երրորդ պարբերությոներում նշված համակարգերին:

Հիմնական էլեկտրական վահանակը և վթարային էլեկտրական վահանակը հնարավորինս պետք է այնպես տեղակայված լինեն, որպեսզի միաժամանակ չենթարկվեն ջրի կամ կրակի ազդեցությանը:

2.3. Վահանակների վրա պետք է հստակորեն նշում կատարվի, հալուն ապահովիչները և ապահովիչների բնիկները պետք է պարբերաբար ստուգվեն՝ ապահովելու համար հալուն ապահովիչների պարամետրերի ճիշտ կիրառումը:

2.4. Այն խցիկները, որտեղ կուտակչային մարտկոցներ են պահվում , պետք է համապատասխանորեն օդափոխվեն:

2.5. Էլեկտրոնային նավիգացիոն սարքավորումները պետք է հաճախակի փորձարկվեն և տեխնիկապես լավ սպասարկվեն:

2.6. Ամբարձման համար օգտագործվող բոլոր սարքավորումները պետք է պարբերաբար փորձարկվեն և ստուգվեն:

2.7. Բացատարման կարապիկի, ամբարձման մեխանիզմների և հարակից սարքավորումների բոլոր մասերը պետք է պահվեն սարքին և աշխատանքային բարվոք վիճակում:

2.8. Սառեցման սարքավորումներ և սեղմված օդի մատակարարման համակարգեր տեղակայված լինելու դեպքում, դրանք պետք է տեխնիկապես լավ սպասարկվեն և պարբերաբար ստուգվեն:

2.9. Ծանր գազերով աշխատող խոհարարական ու կենցաղային պարագաները պետք է օգտագործվեն միայն լավ օդափոխված տարածքներում, և պետք է ուշադիր լինել՝ գազի վտանգավոր կուտակումից խուսափելու համար:

Դյուրավառ և այլ վտանգավոր գազեր պարունակող բալոնների վրա պետք է հստակորեն նշում կատարվի դրանց պարունակության վերաբերյալ, և դրանք պետք է դասավորված լինեն բաց տախտակամածների վրա:

Բոլոր փականները, ճնշման կարգավորիչները և բալոններից դուրս եկող խողովակները պետք է պաշտպանված լինեն վնասվածքներից:

3. Ռադիոկայանքները

Ռադիոկայանքը պետք է ցանկացած ժամանակ անընդհատ կապ ապահովի առնվազն մեկ ափամերձ կամ վերգետնյա կայանքի հետ՝ հաշվի առնելով ռադիոալիքների տարածման նորմալ պայմանները:

4. Վթարային անցուղիները և ելքերը

4.1. Այն անցուղիները և ելքերը, որոնք կարող են օգտագործվել որպես վթարային անցուղիներ և ելքեր, պետք է ցանկացած ժամանակ անխոչընդոտ ու հեշտ անցանելի լինեն և տանեն հնարավորինս ուղղակիորեն դեպի բաց տախտակամած կամ ապահով վայր և

այդտեղից՝ փրկարար նավեր այնպես, որ աշխատողները հնարավորինս արագ և ապահով կարողանան լքել իրենց աշխատակայանները կամ բնակելի տարածքները:

4.2. Որպես վթարային կիրառվելու հնարավորություն ունեցող անցուղիների և ելքերի թիվը, բաշխվածությունը և չափսերը պետք է կախված լինեն դրանց կիրառությունից, սարքավորումներից և աշխատավայրի ու բնակելի տարածքի չափսերից, ինչպես նաև ներկա գտնվող անձանց հնարավոր առավելագույն թվից:

Որպես վթարային կիրառվելու հնարավորություն ունեցող և փակ ելքերը արտակարգ իրավիճակի դեպքում պետք է ցանկացած աշխատակցի կամ փրկարարական խմբի կողմից անմիջապես և հեշտությամբ օգտագործվելու հնարավորություն ունենան:

4.3. Վթարային անցուղիները և ելքերը պետք է ցույց տրվեն նշանների միջոցով՝ 92/58/ԵՏՀ հրահանգը փոխատեղող ազգային դրույթների համաձայն:

Այդ նշանները պետք է տեղադրվեն համապատասխան կետերում և մշտապես պահպանվեն:

4.4. Լուսավորության կարիք ունեցող վթարային անցուղիները, հարմարանքները և վթարային ելքերը հոսանքազրկման դեպքում պետք է ապահովվեն համապատասխան ուժգնության վթարային լուսավորմամբ:

5. Հրդեհի հայտնաբերումը և հրդեհամարումը

5.1. Կախված նավի չափսերից և օգտագործման նպատակներից, դրանում պարունակվող սարքավորումներից, առկա նյութերի ֆիզիկական ու քիմիական հատկանիշներից, ներկա գտնվող անձանց հնարավոր առավելագույն թվից՝ բնակելի տարածությունները և փակ աշխատավայրերը, այդ թվում՝ մեքենասարահը և, անհրաժեշտության դեպքում՝ ձկներ պահելու նավամբարը, պետք է հագեցված լինեն հրդեհամարման համապատասխան սարքերով, իսկ անհրաժեշտության դեպքում՝ հրդեհի հայտնաբերման սարքերով և ազդանշանային համակարգերով:

5.2. Հրդեհամարման սարքերը պետք է մշտապես պահվեն ճիշտ վայրում, պահպանվեն լավ աշխատանքային վիճակում և հասանելի լինեն անհապաղ օգտագործման համար:

Աշխատողները պետք է ծանոթ լինեն հրդեհամարման սարքերի գտնվելու վայրին, դրանց աշխատելու եղանակին և դրանց օգտագործման ձևին:

Նախքան նավի մեկնումը՝ պետք է մշտապես ստուգվի հրամարիչների և հրդեհամարման այլ շարժական սարքերի առկայությունը:

5.3. Ձեռքով կառավարվող հրդեհամարման սարքերը պետք է հեշտ հասանելի ու օգտագործման համար պարզ լինեն և պետք է ցույց տրվեն նշանների միջոցով՝ 92/58/ԵՏՀ հրահանգը փոխատեղող ազգային դրույթների համաձայն:

Այդ նշանները պետք է տեղադրվեն համապատասխան կետերում և մշտապես պահպանվեն: :

5.4. Հրդեհի հայտնաբերման և ազդանշանային համակարգերը պետք է պարբերաբար փորձարկվեն ու տեխնիկապես լավ սպասարկվեն:

5.5. Պարբերաբար պետք է անցկացվեն հրդեհամարման վարժանքներ:

6. Փակ աշխատավայրերի օդափոխությունը

Անհրաժեշտ է ձեռնարկել քայլեր՝ հավաստիանալու համար, որ փակ աշխատավայրերում առկա է բավարար չափով մատակարարվող մաքուր օդ՝ հաշվի առնելով կիրառվող աշխատանքային մեթոդները և աշխատողների նկատմամբ սահմանված ֆիզիկական պահանջները:

Օդափոխության մեխանիկական համակարգի կիրառման դեպքում, այն պետք է պահպանվի բարվոք վիճակում:

7. Աշխատանքային տարածքներում առկա ջերմաստիճանը

7.1. Ջերմաստիճանն աշխատանքային տարածքներում պետք է համարժեք լինի աշխատանքային ժամերի ընթացքում մարդու օրգանիզմի համար անհրաժեշտ ջերմաստիճանին՝ հաշվի առնելով կիրառվող աշխատանքային մեթոդները և աշխատողների նկատմամբ սահմանված ֆիզիկական պահանջները, ինչպես նաև եղանակային փաստացի կամ հնարավոր պայմաններն այն տարածքում, որտեղ գործում է նավը:

7.2. Ջերմաստիճանը բնակելի տարածություններում, սանհանգույցներում, ճաշարաններում և առաջին օգնություն համար նախատեսված սենյակներում, այդ տարածքների առկայության դեպքում, պետք է համապատասխանի այդպիսի տարածքների օգտագործման հատուկ նշանակությանը:

8. Աշխատավայրերի բնական և արհեստական լուսավորությունը

8.1. Աշխատավայրերը պետք է հնարավորինս ապահովված լինեն բնական լույսով և հագեցված լինեն աշխատանքներ իրականացնելու համար պատշաճ արհեստական լուսավորության սարքերով՝ առանց վնասելու աշխատողների անվտանգությունն ու առողջությունը և կամ վտանգելու մյուս նավերը:

8.2. Աշխատանքային տարածքներում, աստիճանների, սանդուղքների մոտ և միջանցքներում լուսավորման սարքավորումները պետք է տեղադրված լինեն այնպես, որ սահմանված լուսավորության տեսակը դժբախտ պատահարի առաջացման ռիսկ չներկայացնի աշխատողների համար և չխոչընդոտի նավի նավագնացությունը:

8.3. Այն աշխատավայրերը, որտեղ աշխատողներն առավելապես բարձր ռիսկի են ենթարկված, արհեստական լուսավորության խափանումների դեպքում, պետք է ապահովված լինեն համապատասխան ուժգնության վթարային լուսավորմամբ:

8.4. Վթարային լուսավորությունը պետք է պահպանվի արդյունավետ կերպով գործող վիճակում և փորձարկվի պարբերաբար:

9. Տախտակամածները, միջնորմները և խցի վերնամասերը

9.1. Աշխատողների համար մատչելի տարածքները պետք է լինեն ոչ սայթաքուն կամ հակասայթաքուն կամ հագեցված լինեն ընկնելը կանխող սարքերով և հնարավորինս զերծ պահվեն խոչընդոտներից:

9.2. Աշխատակայաններ ընդգրկող աշխատավայրերը հնարավորինս պետք է բավարար չափով ձայնամեկուսացված և մեկուսացված լինեն՝ հաշվի առնելով ընդգրկված առաջադրանքների տեսակն ու աշխատողների ֆիզիկական ակտիվությունը:

9.3. Տախտակամածների, միջնորմների և խցի վերնամասերի մակերեսներն աշխատանքային տարածքներում պետք է լինեն այնպիսին, որ հնարավոր լինի դրանք մաքրել կամ նորացնել՝ հիգիենայի համապատասխան նորմերի համաձայն:

10. Դռները

10.1. Միջոցներ պետք է նախատեսվեն, որպեսզի դռները հնարավոր լինի ցանկացած ժամանակ օգտագործել ներսից՝ առանց հատուկ սարքավորումների:

Աշխատանքային տարածքների օգտագործման ժամանակ դռները պետք է հնարավոր լինի գործածել ցանկացած կողմից:

10.2. Դռները և, մասնավորապես, սահող դռները, եթե այդպիսիք գործածվում են, ապա պետք է օգտագործվեն աշխատողների համար հնարավորինս անվտանգ կերպով՝ հատկապես եղանակային կամ ծովային վատ պայմաններում:

11. Երթուղիները – վտանգավոր տարածքները

11.1. Միջանցքները, ճոռերը, խցի վերնամասերի արտաքին հատվածները և բոլոր երթուղիներն ընդհանրապես պետք է ապահովված լինեն ճաղաշարերով, բռնածողերով ու փրկապարաններով և նավի վրա աշխատանքներ իրականացնելու ժամանակ աշխատողների անվտանգությունն ապահովող այլ միջոցներով:

11.2. Եթե աշխատողներին տախտակամածի բացվածքներից, կամ մեկ տախտակամածից մյուսի վրա ընկնելու վտանգ է սպառնում, ապա պետք է ապահովել համապատասխան պաշտպանություն այնտեղ, որտեղ դա հնարավոր է:

11.3. Աշխատանքներ կատարելու կամ տեխնիկական սպասարկման նպատակով մուտքը դեպի տախտակամածից վերև գտնվող կայանքներ պետք է այնպիսին լինի, որ ապահովի աշխատողների անվտանգությունը:

Ընկնելը կանխելու համար պետք է նախատեսվեն ճաղաշարեր կամ համապատասխան բարձրության նմանատիպ պաշտպանական սարքեր:

11.4. Նավակողի ելուստները կամ նավից ընկնելը կանխելու համար նախատեսված մյուս միջոցները պետք է պահվեն գործող վիճակում:

Նավակողի ելուստները պետք է ունենան նավակողանցքներ կամ այլ համանման սարքեր՝ ջուրն արագ դատարկելու համար:

11.5. Թեք հարթակներով նավախելային ձկնորսանավերի դեպքում, թեք հարթակի վրա պետք է տեղադրված լինեն ուղեկալներ կամ նավակողի ելուստների նման՝ միևնույն բարձրության պաշտպանական այլ միջոցներ կամ այլ հարակից միջոցներ՝ թեք հարթակին ընկնելու վտանգից աշխատողներին պաշտպանելու նպատակով:

Այդ ուղեկալները կամ մյուս սարքերը պետք է հնարավոր լինեն հեշտությամբ բացվել և փակվել և պետք է բաց լինեն միայն ցանցը նետելու կամ այն դուրս բերելու համար:

12. Աշխատակայանների կառուցվածքը

12.1. Աշխատանքային տարածքները պետք է մաքուր վիճակում պահվեն և հնարավորինս պաշտպանված լինեն ծովից, ինչպես նաև նավի վրա կամ նավի վրայից ընկնելու վտանգի դեմ համարժեք պաշտպանություն ապահովեն աշխատողների համար:

Բեռնման և բեռնաթափման համար նախատեսված տարածքները պետք է բավականաչափ ընդարձակ լինեն ինչպես բարձրությամբ, այնպես էլ մակերեսով:

12.2. Այն դեպքում, երբ շարժիչները կառավարվում են մեքենասրահից, ապա դրանք պետք է կառավարվեն առանձին տարածքից, որը, որպես այդպիսին, ձայնամեկուսացված և մեկուսացված կլինի մեքենասրահից ու առանց այդ տարածք մուտք գործելու հասանելի կլինի:

Նավավարման կամրջակը համարվում է մի տարածք, որը համապատասխանում է առաջին ենթապարբերության պահանջներին:

12.3. Բացատարման կարապիկի կառավարման սարքերը պետք է տեղադրված լինեն բավականաչափ ընդարձակ տարածքում՝ օպերատորներին անարգել աշխատելու հնարավորություն տալու համար:

Բացատարման կարապիկը պետք է ունենա նաև արտակարգ իրավիճակների համար նախատեսված համապատասխան անվտանգության սարքեր, այդ թվում՝ վթարային շարժականգի հարմարանքներ:

12.4. Բացատարման կարապիկի օպերատորների տեսադաշտում պետք է համապատասխանաբար երևան ինչպես բացատարման կարապիկը, այնպես էլ աշխատողները՝ աշխատելիս:

Բացատարման կարապիկը կամրջակից կառավարվելու դեպքում, օպերատորի տեսադաշտում պետք է նաև ուղղակիորեն կամ այլ համապատասխան միջոցներով հստակ կերպով երևան աշխատողները՝ աշխատելիս:

12.5. Կամրջակի և աշխատանքային հարթակի միջև պետք է կիրառվի հաղորդակցության հուսալի համակարգ:

12.6. Պետք է մշտապես զգոնություն ցուցաբերվի, և անձնակազմի անդամները ձկնորսության ժամանակ կամ տախտակամածի վրա այլ աշխատանքներ կատարելիս պետք է զգուշացվեն մոտալուտ մեծ ալիքների անմիջական վտանգի մասին:

12.7. Չպաշտպանված պարանների և ճոպանների, ինչպես նաև սարքավորումների շարժվող մասերի հետ շփումը պետք է նվազագույնի հասցվի պաշտպանական սարքերի տեղակայման միջոցով:

12.8. Հատկապես նավախելային ձկնորսանավերի վրա պետք է տեղակայվեն շարժվող զանգվածների համար նախատեսված կառավարման սարքեր՝

-պահանգատախտակներն անշարժ պահելու սարքեր.

- ուռկանի ճոճը կարգավորող սարքեր:

13. Բնակելի տարածությունները

13.1. Աշխատողների համար նախատեսված բնակելի տարածությունները, եթե այդպիսիք կան, պետք է այնպիսին լինեն, որ դրանց միջոցով նվազագույնի հասցվեն աղմուկը, թրթռումները, շարժման և արագացման ազդեցություններն ու նավի մյուս հատվածներից եկող տհաճ հոտերը:

Բնակելի տարածություններում պետք է տեղադրված լինեն համապատասխան լուսավորության սարքեր:

13.2. Նավախոհանոցը և ընդհանուր ճաշարանը, եթե այդպիսիք կան, պետք է լինեն համապատասխան չափսերի, լավ լուսավորված ու օդափոխված և հնարավոր լինի դրանք հեշտությամբ մաքրել:

Անհրաժեշտ է նախատեսել սառնարաններ և սննդամթերք պահելու համար ցածր ջերմաստիճան ապահովող այլ սարքավորումների առկայությունը:

14. Սանհանգույցները

Բնակելի տարածություններ ունեցող նավերի վրա պետք է տեղադրվեն զուգարաններ, լվացարանակոնքեր և, հնարավորության դեպքում՝ ցնցուղարաններ, և համապատասխան տարածքները պետք է պատշաճ կերպով օդափոխվեն:

15. Առաջին օգնությունը

Նավերի վրա պետք է առկա լինեն 92/29/ԵՏՀ հրահանգի II հավելվածի պահանջները բավարարող առաջին օգնության սարքավորումներ:

16. Արտաքին սանդուղքները և լաստակները

Պետք է առկա լինեն արտաքին սանդուղքներ, լաստակներ կամ նմանատիպ այլ սարքավորումներ, որոնք նավ բարձրանալու համար ապահովում են պատշաճ, անվտանգ միջոցներով:

ՀԱՎԵԼՎԱԾ III

ՓՐԿԱՐԱՐԱԿԱՆ ԵՎ ՎԹԱՐԱՅԻՆ-ՓՐԿԱՐԱՐԱԿԱՆ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՄԱՍՈՎ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ՊԱՀԱՆՋՆԵՐ (7(1)(դ) հոդված)

Նախնական նշում

Սույն հավելվածով սահմանված պարտավորությունները կիրառվում են այն բոլոր դեպքերում, երբ դա պահանջվում է՝ ելնելով աշխատավայրին բնորոշ առանձնահատկություններից՝ գործունեության տեսակից, հանգամանքներից կամ նավի վրա որոշակի ռիսկի առկայությունից:

1. Նավերի վրա պետք է առկա լինեն փրկարարական և վթարային-փրկարարական սարքավորումներ՝ ներառյալ աշխատողներին ջրախեղդ լինելուց փրկելու միջոցները և փրկարարական ռադիոսարքավորումները, մասնավորապես, վթարային իրավիճակում գտնվելու վայրը մատնանշող ռադիոփարոս՝ հիդրոստատիկ անջատիչ մեխանիզմով՝ հաշվի առնելով նավի վրա գտնվող անձանց թիվը և այն տարածքը, որտեղ գործում է նավը:

2. Փրկարարական և վթարային-փրկարարական սարքավորումների բոլոր մասերը պետք է պահվեն իրենց ճիշտ տեղերում, պահպանվեն աշխատանքային լավ վիճակում և հասանելի լինեն անհապաղ օգտագործման համար:

Դրանք աշխատողների կողմից պետք է ստուգվեն նախքան նավի՝ նավահանգիստը լքելը և նավարկության ժամանակ:

3. Փրկարարական և վթարային-փրկարարական սարքավորումները պետք է պարբերաբար ստուգվեն:

4. Բոլոր աշխատողները պետք է համապատասխան վերապատրաստում անցնեն և արտակարգ իրավիճակներում գործելու վերաբերյալ անհրաժեշտ ցուցումներ ստանան:

5. Այն դեպքում, երբ նավի լայնությունը գերազանցում է 45 մետրը կամ դրա վրա աշխատում են հինգ կամ ավելի աշխատողներ, ապա պետք է նախատեսվի կարգացուցակ՝ յուրաքանչյուր աշխատողի համար նախատեսված հստակ ցուցումներով, որոնց պետք է հետևել արտակարգ իրավիճակների ժամանակ:

6. Նավահանգստում և (կամ) ծովում փրկարարական վարժանքների համար յուրաքանչյուր ամիս պետք է իրականացվի աշխատողների հավաք:

Այդ վարժանքներով պետք է ապահովել, որ աշխատողները հիմնովին հասկանան և որպես վարժանք իրականացնեն բեռնման և բեռնաթափման, փրկարարական ու վթարային-փրկարարական սարքավորումների հետ գործ ունենալու և դրանք շահագործելու հետ կապված իրենց պարտականությունները:

Աշխատողներին պետք է վերապատրաստել ռադիոսարքավորումների տեղադրման և շահագործման վերաբերյալ, եթե այդպիսիք կան:

ՀԱՎԵԼՎԱԾ IV

ԱՆՀԱՏԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՄԱՍՈՎ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ՊԱՀԱՆՋՆԵՐ

(7(1)(ե) հոդված)

Նախնական նշում

Սույն հավելվածով սահմանված պարտավորությունները գործում են այն բոլոր դեպքերում, երբ դա պահանջվում է՝ ելնելով աշխատավայրին բնորոշ առանձնահատկություններից, գործունեության տեսակից, հանգամանքներից կամ նավի վրա որոշակի ռիսկի առկայությունից:

1. Այն դեպքում, երբ աշխատողների անվտանգությանը և առողջությանը սպառնացող ռիսկերը հնարավոր չէ կանխել կամ բավականաչափ սահմանափակել պաշտպանության կոլեկտիվ կամ տեխնիկական միջոցներով, նրանց պետք է ապահովել անհատական պաշտպանության սարքավորումներով:

2. Կամ որպես հանդերձանք օգտագործված, կամ հանդերձանքի վրայի անհատական պաշտպանության սարքավորումները պետք է լինեն ցայտուն գույներով՝ ծովային միջավայրին հակադրվող և հստակ տեսանելի: